

Խայտարդետ ժապավենը

հեղինակ՝ Արթուր Կոնան Դոյլ

թարգմանիչ՝ Վ. Տայան

Թերթում եմ իմ գրառումները՝ Շերլոկ Հոլմսի արկածների մասին, իսկ այդպիսի նոթեր յոթանասունից ավելին ունեմ, եւ դրանց մեջ բավականաչափ ողբերգական բաներ եմ գտնում. որոշ բան զվարճալի է, որոշ բան տարօրինակ, բայց ոչ մկում հասարակ ոչինչ չկա: Աշխատելով իր արվեստի սիրույն, եւ ոչ թե ի սեր փողի, Հոլմսը երբեք հանձն չէր առնում հետաքննել սովորական, անհամ գործեր. նրան միշտ գրավում էին միմիայն այնպիսիները, որոնց մեջ որեւէ անսովոր, երբեմն նույնիսկ ֆանտաստիկ բան կար:

Առանձնապես արտառոց է թվում ինձ Ռոյլոթի գործը: Ես ու Հոլմսը՝ երկու ամուրի, այն ժամանակ միասին ապրում էինք Բեյքրատրիտում: Հավանական է՝ ես առաջ էլ կիրապարակեի գրառումներս, բայց խոսք էի տվել այդ գործը գաղտնի պահել և այդ խոստումից ազատվեցի միայն մի ամիս առաջ՝ այն կնոջ վաղաժամ մահից հետո, որին տրված էր այդ երդումը: Թերևս անօգուտ չի լինի ներկայացնել այդ գործը ճշմարիտ լույսի տակ, որովհետև տարածված լուրերը բժիշկ Գրիմսբի Ռոյլոթի մահը վերագրում էին շատ ավելի սարսափելի հանգամանքների, քան այն, ինչ իրականում եղել են:

1888 թվականի ապրիլյան մի առավոտ արթնանալով, ես տեսա, որ Շերլոկ Հոլմսը կանգնած է մահճակալիս մոտ: Հագել է ոչ տանու հագուստ: Սովորաբար նա անկողնուց ուշ էր ելնում, բայց այդ առավոտ բուխարիկի վրայի ժամացույցը ցույց էր տալիս միմիայն յոթն անց քառորդ: Ես նրան նայեցի զարմանքով և նույնիսկ մի փոքր հանդիմանությամբ:

— Շատ եմ ցավում, որ արթնացրի ձեզ, Ուոտսըն, — ասաց նա, — բայց այդպիսի օր է այսօր, ինչ արած: Արթնացրել են միսսիս Հադսոնին, նա՛ ինձ, ես էլ՝ ձեզ:

— Ի՞նչ է եղել որ, հրդեհ է:

— Ոչ, կլիենտուհի: Ինչոր մի օրիորդ, սաստիկ հուզված, ժամանել է այստեղ և ցանկանում է անպայման տեսնվել ինձ հետ: Նա սպասում է ընդունարանում: Իսկ եթե ջահել տիկնայք այս վաղ ժամին համարձակվում են ճանապարհորդել

մայրաքաղաքի փողոցներով և անկողնուց հանել անծանոթ մարդկանց, ենթադրում եմ, որ նրանք ուզում են հաղորդել ինչոր շատ կարևոր փաստեր: Գործը կարող է շատ հետաքրքիր լինել, և ձեզ համար տհաճ կլինի, եթե չլսեք այս պատմությունը հենց առաջին բառից սկսած:

— Երջանիկ կլինեմ՝ լսելու այդ պատմությունը:

Ես ավելի մեծ հաճույք չգիտեի, քան հետևել Հովմսին նրա պրոֆեսիոնալ զբաղմունքների ժամանակ և հիանալ նրա սրբնթաց մտածողությամբ: Երբեմն թվում էր, թե նա իրեն առաջարկած առեղծվածները լուծում է ոչ թե բանականությամբ, այլ ինչոր ոգեշունչ զգացողությամբ, բայց իրականում նրա բոլոր եզրակացությունները հիմնված էին ճշգրիտ ու խիստ տրամաբանության վրա:

Ես արագ հագնվեցի և մի քանի րոպե հետո արդեն պատրաստ էի: Մենք մտանք հյուրասենյակ: Սև հագած և դեմքին թանձր քող իջեցրած կինը ոտքի ելավ, երբ մենք հայտնվեցինք:

— Բարի լույս, օրիո՛րդ, — սիրալիր ասաց Հովմսը: — Իմ անունը Շերլոկ Հովմս է: Սա իմ մտոիկ բարեկամն է և օգնականը՝ դոկտոր Ուոտսոնը, որի հետ կարող եք նույնքան անկեղծ լինել, որքան ինձ հետ: Ըհը՛, տեսնում եմ, որ միսսիս Հադսոնը գլխի է ընկել վառել բուխարիկը: Դա լավ է, որովհետև դուք սաստիկ մրսել եք: Կրակին մոտ նստեցեք և թույլ տվեք մի գավաթ սուրճ առաջարկել ձեզ:

— Ցուրտը չի, որ ինձ ստիպում է դողալ, մի՛ ստր Հովմս, — կամացուկ ասաց կինը, բուխարիկին մոտ նստելով:

— Ի՞նչն է հապա:

— Վախը, մի՛ ստր Հովմս, սարսա՛փը. . .

Այս խոսքի վրա նա բարձրացրեց դեմքի քողը, ու մենք տեսանք, թե որքան է նա վրդովված, ինչքա՛ն գունատ ու սարսափից աղավաղված է նրա դեմքը: Նրա սառած աչքերում մի ահ կար, որ հալածված գազանի աչքերում է լինում: Նա երեսուն տարեկանից ավելի չէր, բայց մազերի մեջ արդեն փայլում էին ճերմակները:

Շերլոկ Հովմսը ոտից գլուխ չափեց նրան իր արագասահ, ամեն ինչ հասկացող մարդու հայացքով:

— Դուք վախենալու հարկ չունեք, — ասաց նա, քնքշությամբ շոյելով օրիորդի ձեռքը: — Ես համոզված եմ, որ մեզ կհաջողվի հեռացնել ձեզանից բոլոր անախորժությունները. . . Դուք ժամանել եք առավոտյան գնացքով:

— Մի՞ թե դուք ինձ ճանաչում եք:

— Ո՛չ, բայց ձեր ձախ ձեռնոցի մեջ ես նշմարեցի վերադարձի տոմար: Դուք վաղ էք վեր կացել, իսկ հետո կայարանի անպետք ճանապարհին երկար թափահարվել էք երկանիվ կառքում:

Կինն ուժգին ցնցվեց ու շփոթված նայեց Հովմսին:

— Այստեղ ոչ մի հրաշք չկա, օրիո՛րդ, — ասաց նա ժպտալով: — Ձեր ժակետի ձախ թևքը առնվազն յոթ տեղ ցեխոտված է: Բծերը միանգամայն թարմ են: Այդպես ցեխոտվել կարելի է միայն երկանիվ կառքում, եթե կառապանի ձախ կողմն էք նստած:

— Հենց այդպես էլ եղել է, — ասաց կինը: — Ժամը վեցին մոտ ես դուրս եկա տնից, վեցն անց քսան րոպե Լետերհեդում էի և առաջին գնացքով եկա Լոնդոն՝ Վաթեռլոո կայարանը. . . Սը՛ր, ես այլևս չեմ կարող դիմանալ, ես կխելագարվե՛մ. . . Կմեռնե՛մ. . . Ոչ մի մարդ չունեմ, որին կարողանայի դիմել: Հա՛, մի մարդ կա, որը մեծապես սրտակցում է ինձ, բայց ինչո՞վ կարող է օգնել ինձ այդ խեղճը: Ձեր անունը լսել եմ, մի՛ ստր Հովմս, լսել եմ միսսիս Ֆարընտոշից, որին դուք այնպես օգնել էք նրա ծանր վշտի պահին: Նա տվեց ինձ ձեր հասցեն: Օ՛, սը՛ր, ինձ էլ օգնեցեք, կամ գոնե փորձեք գեթ մի քիչ լուսավորել այն անթափանց խավարը, որ շրջապատում է ինձ: Հիմա ես ի վիճակի չեմ որևէ բանով վարձահատույց լինելու ձեր ծառայությունների համար, բայց մի երկու ամիս հետո ամուսնացած կլինեմ. այն ժամանակ իրավունք կունենամ տնօրինել եկամուտներս, և դուք կտեսնեք, որ ես կարողանում եմ երախտապարտ լինել:

Հովմսը մոտեցավ բարձրաշեղ գրասեղանին, բացեց այն, հանեց ծոցատետրը:

— Ֆարընտո՛շ. . . — ասաց նա: — Հա՛, հիշեցի այդ դեպքը: Իմ կարծիքով դա դեռ մինչև մեր ծանոթությունն էր, Ուո՛տսըն: Խնդիրը վերաբերում էր արևաքարերից պատրաստած ապարոշին: Կարող եմ ձեզ վստահեցնել, օրիո՛րդ, որ երջանիկ կլինեմ ձեր գործին մոտենալ նույնպիսի ջանասիրությամբ, ինչպես վերաբերվեցի ձեր մտերիմ ընկերուհու գործին: Իսկ վարձատրություն ինձ ամենևին հարկավոր չէ, քանի որ իմ աշխատանքն ինձ համար պարզ և է որ կա: Բհարկե, որոշ ծախսեր կունենամ, և դուք կարող էք դրանք հատուցել, երբ որ կամենաք: Իսկ այժմ խնդրում եմ՝ հաղորդեք մեզ ձեր գործի բոլոր մանրամասնությունները:

— Ավա՛դ, — պատասխանեց օրիորդը: — Դրությանս ահավորությունը կայանում է նրանում, որ իմ վախն այնքա՛ն անորոշ ու մշուշապատ է, կասկածներս հիմնված են այնպիսի մանրուքների վրա, որ անգամ այն մարդը, որին իրավունք ունեմ դիմելու խորհրդի և օգնության համար, բոլոր պատմություններս համարում է ջղային կնոջ ցնդբանություններ: Նա ինձ ոչինչ չի ասում, բայց ես այդ բոլորը կարդում եմ նրա հանգստացնող բառերի և խուսափող հայացքների մեջ: Լսել եմ, որ դուք, միստր Հովմս, ամենից լավ էք հասկանում մարդկային սրտի արատավոր

հակումները և կարող եք խորհուրդ տալ, թե ի՞նչ անեմ ինձ շրջապատող վտանգների միջև:

— Ես ամբողջովին ուշադրություն եմ, օրիորդ:

— Իմ անունը Էլլեն Ստոներ է: Ապրում եմ խորթ հորս՝ Ռոյլոթի տանը: Նա Անգլիայի հնագույն սաքսոնական տոհմերից մեկի վերջին շառավիղն է:

Հոլմսը գլխով արեց.

— Ինձ ծանոթ է այդ անունը, — ասաց նա:

— Կար ժամանակ, երբ Ռոյլոթների տոհմը ամենահարուստներից մեկն էր Անգլիայում: Ռոյլոթները հյուսիսում տիրում էին Բերքշիրում եղած կալվածքներին, իսկ արևմուտքում՝ Հեմպշիրում եղած: Սակայն անցյալ դարում չորս սերունդ իրար հետևից վատնեցին ամբողջ ունեցվածքը, մինչև ժառանգներից մեկը, որ կրքոտ թուղթ խաղացող էր, ռեգենտության ժամանակ վերջնականապես քայքայեց ընտանիքը: Նախկին կալվածքից մնաց միայն մի քանի ակր հող ու մեկ էլ հինավուրց տունը, որ շինված է մոտավորապես երկու հարյուր տարի առաջ: Ասենք, տունը վաղուց է գրավ դրված:

Այդ տոհմի վերջին կալվածատերն իր տանը քարշ էր տալիս աղքատ ազնվականի գոյությունը: Բայց սրա միակ որդին՝ խորթ հայրս, հասկանալով, որ հարկավոր է մի կերպ հարմարվել իրերի նոր դրությանը, ինչոր բարեկամից փող է առնում՝ անհրաժեշտ մի գումար, ընդունվում է համալսարան, ավարտում է բժշկի դիպլոմով ու գնում Կալկաթա, որտեղ իր վարպետության ու ինքնագույն շնորհիվ շուտով լայն պրակտիկա է ձեռք բերում: Բայց անհա, նրա տանը գողություն է լինում: Այդ կողոպուտը Ռոյլոթին այնպես է վրդովում, որ կատաղության նույնիսկ ժամանակ ծեծելով մեռնելու դուռն է հասցնում տեղացի ավագ սպասավորին, որը ծառայում էր նրա մոտ: Հազիվհազ ազատվելով մահապատժից, Ռոյլոթը երկար ժամանակ տանջվում է բանտում, իսկ հետո վերադառնում է Անգլիա՝ որպես մռայլ և հուսալքված մի մարդ:

Հնդկաստանում Ռոյլոթն ամուսնացել էր մորս՝ միսսիս Ստոների, բենգալական^[1] հրետանու գեներալմայորի այրու հետ: Մենք երկվորյակներ էինք, ես ու քույրս՝ Ջուլիան: Երբ մայրս ամուսնացավ բժշկի հետ, մենք հազիվ երկու տարեկան էինք: Մայրս կարգին կարողություն ուներ, որը տարեկան հազար ֆունտից ոչ պակաս եկամուտ էր բերում: Նրա կտակի համաձայն այդ ամբողջ եկամուտից պիտի օգտվեր դոկտոր Ռոյլոթը, բայց այնքան ժամանակ, որքան մենք ապրում ենք նրա տանը: Եթե մենք ամուսնանանք, ապա մեզանից յուրաքանչյուրի համար տարեկան եկամուտից պետք է առանձնացվի որոշ գումար:

Մեր Անգիա վերադառնալուց քիչ անց մայրս մեռավ. նա գոհվեց ութ տարի առաջ երկաթուղային աղետի ժամանակ: Մորս մահից հետո բժիշկ Ռոյլոթը թողեց բժշկական պրակտիկան գլուխ բերելու համար Լոնդոնում բնակություն հաստատելու իր փորձերը և մեզ հետ միասին տեղափոխվեց ՍտոկՄորենում եղած տոհմային կավվածքը: Մեր մոր կարողությունը լրիվ հերիք էր՝ մեր բոլոր ցանկությունները բավարարելու համար, և, թվում էր, թե ոչինչ չպետք է խանգարեր մեր երջանկությանը:

Սակայն տարօրինակ փոփոխություն տեղի ունեցավ խորթ հորս մեջ: Փոխանակ մտերմանալու հարևանների հետ, որոնք սկզբում ուրախացան, տեսնելով, որ ՍտոկՄորենի Ռոյլեթը վերադարձել է հին տոհմային բույնը, նա փակվեց կավվածքում ու շատ հազվադեպ էր դուրս գալիս տնից, և այն էլ միայն նրա համար, որպեսզի սկսի խայտառակ մի վեճ ճանապարհին պատահած առաջին իսկ մարդու հետ:

Սոսկալի դյուրաբորբոքությունը, որ հասնում էր մինչև մոլեգնություն, արական գծով անցնում էր այդ տոհմի բոլոր ներկայացուցիչներին, իսկ խորթ հորս մոտ դա ըստ երևույթին ավելի ուժեղացավ՝ արևադարձային վայրերում երկար մնալու շնորհիվ:

Շատ կատաղի բախումներ ունեցավ նա հարևանների հետ: Գործը երկու անգամ վերջացավ ոստիկանատանը: Հայրս ամբողջ գյուղի ահ ու սարսափը դարձավ: Պետք է ասել, որ նա աներևակայելի ֆիզիկական ուժի տեր է, և քանի որ ցասման նույնի ժամանակ ամեննին չի տիրապետում իրեն, մարդիկ նրան հանդիպելիս բառացիորեն այս ու այն կողմ էին փախչում:

Անցյալ շաբաթ նա գետը շարտեց տեղի դարբնին, և որպեսզի հասարակական խայտառակությունից պրծնենք, ես ստիպված եղա տալ բոլոր փողերս, ինչոր կարողացել էի հավաքել: Նրա միակ բարեկամները թափառական գնչուներն են: Այդ թափառաշրջիկներին նա թույլատրում է վրաններ խփել մոշի թփուտներով պատված հողի այն փոքր տարածության վրա, որն ամբողջ նրա տոհմային կավվածքն է կազմում և երբեմն նրանց հետ քոչվորություն է անում, ամբողջ շաբաթներով տուն չի գալիս: Հետո մեկ էլ կենդանիներ պահելու շատ մեծ սեր ունի. կենդանիները նրան Հնդկաստանից ուղարկում է մի ծանոթ մարդ: Եվ այժմ հորս կավվածքներում ազատ ման են գալիս հովազներն ու պավիանները, գրեթե նույնպիսի սարսափ ազդելով բնակիչներին, ինչպես և ինքը:

Իմ խոսքերից դուք կարող եք եզրակացնել, որ ես ու քույրս այնքան էլ ուրախ չենք ապրել: Ծառաները չէին ուզում ապրել մեզ մոտ, և երկար ժամանակ տան ամբողջ գործը մենք ինքներս էինք անում: Քույրս հազիվ երեսուն տարեկան էր որ մեռավ, բայց մազերն արդեն սպիտակում էին, այնպես, ինչպես իմը:

— Ձեր քույրը մահացել է:

— Նա մեռավ ուղիղ երկու տարի առաջ, և հենց նրա մահվան մասին է, որ ուզում եմ պատմել: Դուք ինքներդ էլ եք հասկանում, որ կյանքի այդպիսի պայմաններում մենք քիչ հնարավորություններ ունեինք հանդիպելու մեր հասակի ու մեր շրջապատի մարդկանց հետ: Մենք չամուսնացած մի մորաքույր ունենք՝ միսս Հոնորիտ Ուեստֆայլը, որն ապրում է Հերոուի մոտերքը, մերթ ընդ մերթ մեզ թույլ էին տալիս հյուր գնալ նրա մոտ: Երկու տարի առաջ քույրս՝ Ջուլիան, անցկացնում էր նրա մոտ ծննդյան տոնը: Այնտեղ նա հանդիպեց նավատորմի մի պաշտոնաթող մայորի, և այդ մարդը նրան փեսացու դարձավ: Վերադառնալով տուն, քույրս մեր խորթ հորը պատմեց իր նշանվելու մասին: Հայրս չառարկեց ամուսնության դեմ, բայց հարսանիքից երկու շաբաթ առաջ տեղի ունեցավ սարսափելի մի դեպք, որն ինձ զրկեց իմ միակ ընկերուհուց:

Շերլոկ Հոլմսը նստած էր բազկաթոռին, ետ կրթնած և գլուխը դրած բազմոցի բարձին: Աչքերը փակ էին: Օրիորդի ասածը լսելով, նա բարձրացրեց կոպերն ու նայեց այցելուին:

— Խնդրում եմ պատմեք ամեն ինչ՝ հնարավորին չափ ճշգրիտ, բաց չթողնելով և ոչ մի մանրամասնություն, — ասաց նա:

— Ինձ համար հեշտ է ճշգրիտ լինելը, որովհետև այդ սարսափելի ժամանակ բոլոր իրադարձությունները խոր մխրճվել են հիշողությանս մեջ. . . Ինչպես արդեն ասացի, կավածատիրական տունը շատ հին է և միայն դրա մի թևն է պիտանի ապրելու համար: Ցածի հարկում տեղավորված են ննջարանները, հյուրասենյակները մեջտեղն են: Առաջին ննջարանում քնում է բժիշկ Ռոյլոթը, երկրորդում քնում էր քույրս, իսկ երրորդում՝ ես: Ննջարանները հաղորդակից չեն, բոլոր դռներն էլ միևնույն միջանցքում են բացվում: Արդյոք բավականաչափ պարզ եմ պատմում:

— Այո, շատ պարզ:

— Բոլոր երեք ննջարանների լուսամուտները բացվում են մարգագետնի վրա: Այդ ճակատագրական գիշերը բժիշկ Ռոյլոթը շուտ քաշվեց իր սենյակը, բայց մենք գիտեինք, որ նա չպառկեց, քանի որ քրոջս երկար ժամանակ անհանգստացնում էր հնդկական թունդ սիգարների հոտը, որ հայրս սովորություն ուներ ծխելու: Այդ հոտն ստիպեց քրոջս լքել իր սենյակը ու գալ իմ կացարանը, որ տեղ մի առ ժամանակ նստեցինք ու շատախոսեցինք նրա առաջիկա ամուսնության մասին: Ժամը տասնմեկին նա վեր կացավ և ուզեց գնալ, բայց դռան մոտ կանգ առավ ու հարցրեց ինձ.

«Ասա, էլե՛ն, քեզ չի՞ թվում, որ գիշերը ինչոր մեկը սուլում է:

— «Ոչ», — ասացի:

«Համոզված ես նաև, որ քեզ չի պատահել՝ քնիդ մեջ սուլես»:

«Իհարկե, չի պատահել: Բայց ինչո՞ւ ես հարցնում»:

«Վերջին գիշերները, ժամը երեքի մոտ, ես լսում եմ կամացուկ և պարզ մի սուլոց: Քնած տեղս ես շատ զգայուն եմ, և սուլոցն ինձ արթնացնում է: Չեմ կարողանում հասկանալ, թե որտեղից է լսվում այդ սուլոցը. կարող է պատահել՝ հարևան սենյակից, կարող է պատահել նաև՝ մարզագետնից: Վաղուց է, որ ուզում եմ հարցնել քեզ, թե դու չե՞ս լսել արդյոք այդ սուլոցը»:

«Ոչ, չեմ լսել: Գուցե գնչունե՞րն են սուլում»:

«Շատ հնարավոր է: Բայց եթե սուլոցը լսվեր մարզագետնից, դու էլ կլսեիր»:

«Ես ավելի պինդ եմ քնում, քան դու»:

«Այս բոլորը դատարկ բաներ են, իհարկե», — ժպտաց քույրս, սենյակիս դուռը փակեց, և մի քանի ակնթարթ անց ես լսեցի, թե ինչպես նրա դռան բանալին չիսկաց փականքի մեջ:

— Ահա թե ի՞նչ, — ասաց Հովմար: — Դուք ամե՞ն գիշեր դռները բանալիով էիք փակում:

— Միշտ:

— Իսկ ինչո՞ւ:

— Կարծեմ արդեն ասացի, որ բժշկի սենյակում հովազ ու պավիան էին ապրում: Մենք մեզ ապահով էինք զգում միայն այն ժամանակ, երբ դռները բանալիով փակում էինք:

— Հասկանալի է: Խնդրեմ, շարունակեցեք

— Գիշերը քնել չկարողացա: Ինչոր անհաղթահարելի դժբախտության խառնաշփոթ մի զգացում համակել էր ինձ: Ահավոր գիշեր էր, քամին ոռնում էր, անձրևը թմբկահարում էր լուսամուտները: Եվ փոթորկի դղրդոցի մեջ հանկարծ լավեց սարսափի անզուսպ մի ճիչ: Քույրս էր ճչում: Ես ցատկեցի մահճակալից և, ուսերիս զցելով մեծ գլխաշորս, դուրս թռա միջանցք: Երբ դուռը բաց արի, ինձ թվաց, թե կամացուկ սուլոց եմ լսում, որի մասին ինձ պատմել էր քույրս, դրանից հետո ինչոր բան զրնգաց, ասես մետաղյա մի ծանր իր ընկավ գետին: Վազեցի քրոջս սենյակի մոտ ու տեսա, որ դուռը կիսաբաց է: Մարսափից ապշած կանգ առա, չըմբռնելով, թե ինչ է կատարվում: Միջանցքում վառվող լամպի լույսի ներքո տեսա քրոջս, որ երևաց դռան

մեջ, հարբածի պես ճոճվելով, սարսափից սպիտակած դեմքով: Նա առաջ էր պարզել ձեռքերը, ասես օգնություն պաղատելով: Մոտ վազեցի ու գրկեցի նրան, բայց այդ րոպեին նրա ծնկները ծալվեցին ու նա փլվեց գետնին: Ասես անտանելի ցավից նա գալարվում էր, իսկ ձեռքերն ու ոտքերը ջղաձգումից կուչ էին գալիս: Սկզբում թվաց, թե նա ինձ ճանաչեց, բայց երբ կոացա նրա վրա, հանկարծ ճչաց. . . Օ՛, ես երբեք չեմ մոռանա նրա սարսափելի ձայնը. . .

«Աստված իմ, էլե՛ն, խայտաբղետ բանդան», — բղավում էր նա:

Նա փորձեց էլի ինչոր բան ասել, մատը պարզեց բժշկի սենյակի կողմը, բայց ջղաձգության մի նոր նուպա կտրեց նրա խոսքը:

Ես դուրս թռա սենյակից ու բարձրաձայն գոչելով, վազեցի խորթ հորս կանչելու: Նա արդեն շտապ գալիս էր ինձ ընդառաջ, գիշերային խալաթը հագին: Քույրս գիտակցությունը կորցրել էր, երբ հայրս վազելով մտավ նրա սենյակը: Բժիշկը նրա բերանը կոնյակ լցրեց և անմիջապես ուղարկեց գյուղական բժշկին կանչելու, բայց փրկելու բոլոր ջանքերը իզուր անցան. և քույրս մեռավ առանց ուշքի գալու: Այսպիսին էր իմ սիրելի քրոջ ահավոր վախճանը. . .

— Թույլ տվեք հարցնել, — ասաց Հովմար. — դուք համոզված եք, որ սուլոց և մետաղի զրնգոց լսեցիք: Կարո՞ղ եք ապացուցել դա երդում տալով:

— Դրա մասին ինձ հարցրել է քննիչը հարցաքննության ժամանակ: Ինձ թվում է, որ ես լսեցի այդ ձայները, բայց ինձ կարող էին շփոթության մեջ գցել փոթորկի ռոնգոներն ու հին տան ճռճոցը:

— Ձեր քույրը հազնված էր:

— Ոչ, նա դուրս թռավ գիշերանոցով: Նրա աջ ձեռքում վառված մի լուցկի կար, իսկ ձախում՝ լուցկու տուփ:

— Դա նշանակում է, որ նա կպցրել է լուցկին ու սկսել շուրջը նայել, երբ նրան ինչոր բան վախեցրել է: Շատ կարևոր մանրամասնություն է: Իսկ ի՞նչ եզրակացության եկավ քննիչը:

— Նա հանգամանորեն ուսումնասիրեց ամբողջ այդ գործը, որովհետև բժիշկ Ռոյլոթի վայրագ բնավորությունն ամբողջ շրջանում հայտնի էր, բայց քննիչին չհաջողվեց քրոջս մահվան քիչ թե շատ համոզիչ պատճառը գտնել: Հետաքննության ժամանակ ես ցուցումսք տվի, որ նրա սենյակի դուռը փակված էր ներսից, իսկ լուսամուտները դրսից պաշտպանված էին հինավուրց փեղկերով, որոնք երկաթե լայն նիզեր ունեին: Պատերը ենթարկվեցին ամենաուշադիր ուսումնասիրության, բայց դրանք ամենուրեք շատ պինդ դուրս եկան: Հատակների հետազոտությունն էլ արդյունք չտվեց: Ծիսնելույզն էլ լայն է. նրա մեջ լրիվ չորս կափույր կա: Այսպիսով, չի

կարելի կասկածել, որ քույրս վրա հասած աղետի ժամանակ միանգամայն մենակ է եղել: Բռնի ուժի գործադրման ոչ մի հետք հնարավոր չեղավ հայտնաբերել:

— Իսկ ի՞նչ կասեք թույնի վերաբերյալ:

— Բժիշկները հետազոտեսցին քրոջս, բայց ոչ մի նշան չգտան, որ ապացուցեր թե թունավորվել է:

— Իսկ ձեր կարծիքով ի՞նչն է մահվան պատճառը:

— Ինձ թվում է, որ նա մեռավ սարսափից և ներվային ցնցումից: Բայց ես չեմ պատկերացնում, թե ով կարող էր նրան այդպես վախեցնել:

— Իսկ գնչուներն այդ ժամանակ կալվածքո՞ւմ էին:

— Այո՛, գնչուները գրեթե միշտ ապրում են մեզ մոտ:

— Իսկ ձեր կարծիքով ի՞նչ կարող էին նշանակել նրա բառերը բանդայի, խայտաբղետ բանդայի մասին:

— Երբեմն ինձ թվում էր, թե այս բառերը ասված են եղել պարզապես զառանցանքի մեջ, իսկ երբեմն էլ մտածում եմ, որ խոսքը վերաբերվում է ինչոր մարդկանց բանդայի, կարող է պատահել գնչուների բանդայի: Բայց ինչո՞ւ այդ բանդան խայտաբղետ է: Հնարավոր է, պուտիկներով գլխաշորերը, որ կապում են շատ գնչուհիներ, ներշնչել էին նրան այդ տարօրինակ մակդիրը:

Հովմար տարուբերեց գլուխը. երևի նման բացատրությունը նրան չէր բավարարում:

— Սա մուլթ գործ է, — ասաց նա: — Խնդրում եմ, շարունակեցեք:

— Այդ օրվանից անցել է երկու տարի. այդ տարիներին ես կյանքում շատ ավելի մենակ էի, քան առաջ: Բայց մի ամիս է, ինչ մի մոտիկ մարդ, որին ես վաղուց ճանաչում էի, առաջարկություն արեց ինձ: Նրա անունը Էրմիտեջ է, Փերսի Էրմիտեջ: Նա Ռեդվինգի մոտ գտնվող Կրենուտտերի բնակիչ միստր Էրմիտեջի երկրորդ որդին է: Խորթ հայրս չի առարկում մեր ամուսնությանը, և զարնանը մենք պետք է պսակվենք:

Երկու օր առաջ մեր տան արևմտյան թևում որոշ վերափոխություններ սկսվեցին: Իմ ննջարանի պատը ծակեցին, և ես ստիպված եղա տեղափոխվել այն սենյակը, որտեղ վախճանվել էր քույրս և քնել հենց այն մահճակալին, որի վրա նա էր քնում: Կարո՞ղ եք պատկերացնել իմ սարսափը, երբ անցյալ գիշեր, անքուն պառկած քրոջս ողբերգական մահվան մասին մտածելու ժամանակ, լռության մեջ

հանկարծակի լսեցի հենց այն կամացուկ սուլոցը, որ քրոջս մահվան նախագուշակը եղավ: Վեր թռա, լամպը վառեցի, բայց սենյակում ոչ ոք չկար: Անկողին մտնել ես չէի կարող. չափից անց ավելո՞ված էր հոգիս. դրա համար էլ հագնվեցի, ու հենց որ լույսը մի քիչ բացվեց, ծլկեցի տնից, մեր դիմացի «Թագ» հյուրանոցում կառք վարձեցի ու եկա Լեոտերիեդ, իսկ այնտեղից էլ այստեղ, միմիայն մի մտքով՝ տեսնել ձեզ ու խորհուրդ խնդրել ձեզանից:

— Շատ խելացի եք վարվել, — ասաց բարեկամս. — բայց արդյոք ամե՞ն ինչ պատմեցիք ինձ:

— Այո՛, ամեն ինչ:

— Ո՛չ, ամեն ինչ չպատմեցիք, մի՛սս Ռոյոլթ. դուք խղճում և պաշտպանում եք ձեր հորը:

— Չեմ հասկանում:

Պատասխանի փոխարեն Հոլմսը ետ գցեց մեր այցելուհու թևքի սև ժանյակե զարդարանքը: Հինգ մատի հետքերը՝ հինգ կարմրած կետերը պարզ երևում էին սպիտակ նախադաստակին:

— Ձեզ հետ շատ դաժան են վարվել, — ասաց Հոլմսը:

Օրիորդը կասկարմիր կտրեց և շտապեց իջեցնել ժանյակը:

— Խորդ հայրս խստաբարո մարդ է, — ասաց նա: — Նա շատ ուժեղ է և, հավանաբար, ինքն էլ չի գիտակցում իր ուժը:

Տիրեց երկար լռություն, որի ժամանակ Հոլմսը նստած էր կզակը ձեռքերին հենած և բուխարիկի մեջ ճարճատող կրակին նայելով:

— Սա շատ բարդ գործ է, — վերջապես ասաց նա: — Կուզենայի պարզել էլի հազարավոր մանրամասնություններ, նախքան որոշելը, թե ինչպես պետք է գործել: Այնինչ ոչ մի բույս կորցնել չի կարելի: Եթե մենք հենց այսօր գանք ՍտոկՄորեն, կհաջողվի՞ արդյոք զննել այդ սենյակներն այնպես, որ ձեր խորթ հայրը ոչինչ չիմանա:

— Նա հենց ասում էր, որ պատրաստվում է այսօր քաղաք գնալ ինչոր շատ կարևոր գործերով: Հնարավոր է, որ բացակայի ամբողջ օրը, և ոչ ոք ձեզ չի խանգարի: Մենք մի տնտեսուհի ունենք, բայց նա պառավ է ու բան չի հասկանում, և ես նրան հեշտությամբ կարող եմ տնից հեռացնել:

— Հիանալի է: Դուք մեր գնալուն ոչինչ դեմ չունե՞ք, Ուոտսըն:

— Բացարձակապես ոչինչ:

— Այդ դեպքում երկուսս էլ կգնանք: Իսկ դուք ինքներդ ի՞նչ եք ուզում անել:

— Որոշ գործեր ունեմ, որ կուզենայի անել այստեղ՝ քաղաքում: Բայց տասներկուսի գնացքով կվերադառնամ, որպեսզի ձեր գալու ժամանակ տեղում լինեմ:

— Մեզ սպասեցեք կեսօրից քիչ անց: Ես էլ որոշ գործեր ունեմ այստեղ: Գուցե դուք մնաք և նախաձաշե՞ք մեզ հետ:

— Ո՛չ, պետք է գնամ: Սրտիցս մի քար ընկավ, երբ վիշտս պատմեցի ձեզ: Ուրախ կլինեմ ձեզ կրկին տեսնելուս համար:

Օրիորդն իջեցրեց դեմքի սև ու թանձր քողը և սենյակից դուրս գնաց:

— Դե՞, ի՞նչ կարծիք ունեք այս բոլորի մասին, Ուո՛տսըն, — հարցրեց Շերլոկ Հոլմսը, ետ ընկնելով բազկաթոռի թիկնակին:

— Ըստ իս, սա վերին աստիճանի մութ ու կեղտոտ գործ է:

— Բավականաչափ կեղտոտ և բավականաչափ մութ:

— Բայց եթե մեր հյուրը ճիշտ էր ասում, պնդելով, թե այդ սենյակի հատակն ու պատերն ամուր են, թե դռներով, լուսամուտներով, ծխնելույզով հնարավոր չէ մտնել այնտեղ, նրա քույրն իր խորհրդավոր մահվան պահին լիակատար մենակության մեջ է եղել:

— Այդ դեպքում, ի՞նչ են նշանակում գիշերային այդ սուլոցներն ու մեռնողի տարօրինակ բառերը:

— Պատկերացնել չեմ կարող:

— Եթե համադրենք բոլոր փաստերը՝ գիշերային սուլոցները, գնչուների բանդան, որի հետ ծեր բժիշկն այդքան մոտ հարաբերություններ ունի, մեռնողի ակնարկները ինչոր բանդայի վերաբերյալ և, վերջապես այն փաստը, որ միսս Էլեն Ստոները լսել է մետաղի գնգոց, որ կարող էր արձակել փեղկի երկաթե նիզը. . . Եթե հիշենք նաև, որ բժիշկը շահագրգռված է իր խորթ աղջկա ամուսնության խափանման մեջ, ես կարծում եմ, որ մենք ճիշտ հետքերով ենք գնում, որոնք կօգնեն մեզ լույս սփռել այս խորհրդավոր պատահարի վրա:

— Իսկ ձեր կարծիքով, ի՞նչ էին անում այնտեղ գնչուները:

— Չգիտեմ. . . Խելքս բան չի կտրում:

— Ես բազմաթիվ առարկություններ ունեմ ձեր հիպոթեզի դեմ:

— Ես էլ ունեմ. դրա համար էլ մենք հենց այսօր կգնանք ՍտոկՄորեն: Ուզում եմ տեղում ստուգել ամեն ինչ. . . Բայց, սատանա՛ն տանի, ի՞նչ է նշանակում այս. . .

Այսպես բացականչեց բարեկամս, որովհետև դուռը հանկարծակի բացվեց ամբողջ լայնությամբ ու սենյակ ներս ընկավ վիթխարի հասակով մի ինչոր անձնավորություն: Նա հագնված էր ոչ այն է բժշկի նման, ոչ այն է կալվածատիրոջ: Նրա տարազը մի տարօրինակ խառնուրդ էր ներկայացնում. սև ցիլինդր, երկար սերթուկ, բարձր զանգապաններ ու որսորդական մորձ: Նա այնքան բոյով էր, որ գլխարկը դիպչում էր մեր դռան շրջանակի վերին մասին, և այնքան թիկնեղ՝ որ հագիվ ներս խցկվեց այդ դռնից: Նրա կոպիտ, արևայրուքից դեղնած դեմքը կտրատված էր հազարավոր կնճիռներով, իսկ խորն ընկած, չարությամբ փայլող աչքերն ու երկար, բարակ և ոսկրոտ քիթը նրան պատավ գիշատիչ թռչունի էին նմանեցնում:

Նա հայացքը Շերլոկ Հոլմսի վրայից տեղափոխում էր ինձ վրա և ընդհակառակը:

— Ձեզանից ո՞րն է Հոլմսը, — վերջապես խոսեց այցելուն:

— Դա իմ անունն է, սը՛ր, — հանգիստ պատասխանեց բարեկամս: — Հիմա դուք իմ հանդեպ մի առավելություն ունեք, քանի որ ձեր ազգանունն ինձ հայտնի չէ:

— Ես ՍտոկՄորենցի բժիշկ Գրիմսբի Ռոյոլթն եմ:

— Նստեցեք, խնդրեմ, բժի՛շկ, — սիրալիր ասաց Շերլոկ Հոլմսը:

— Չե՛մ նստի: Այստեղ էր եկել խորթ աղջիկս: Ես հետևում էի նրան: Ի՞նչ էր ասում նա ձեզ:

— Այս տարվա գարունը ցուրտ է, — ասաց Հոլմսը:

— Ի՞նչ էր ասում նա ձեզ, — չարությամբ բղավեց ծերունին:

— Բայց ես լսել եմ, որ քրքումը հիանալի կծաղկի, — անվրդով շարունակեց բարեկամս:

— Ըհը՛, դուք ուզում եք ինձ գլխներիցդ ու՞նի անել, — ասաց մեր հյուրը, մի քայլ առաջ գալով ու որսորդական մորձը թափահարելով: — Ես ձեզ ճանաչում եմ. դուք ստորի մեկն եք: Արդեն իմացել եմ ձեզ մասին: Դուք սիրում եք ձեր քիթը խոթել ուրիշի գործերի մեջ:

Բարեկամս ժպտաց:

— Դուք խաբեբա եք:

Հովան ավելի լայն ժպտաց:

— Ոստիկանական խուզարկու շուն եք:

Հովանը սրտանց քրքջաց:

— Դուք չափազանց հաճելի գրուցակից եք, — ասաց բարեկամս: — Այստեղից որ դուրս գնաք, դուռը փակեցեք, թե չէ, իսկապես ասած, շատ է փշում:

— Ես կհեռանամ միայն այն ժամանակ, երբ ուզածս կասեմկպրծնեմ: Մտքովներդ թող չանցնի իմ գործերին խառնվել: Գիտեմ, որ միսս Մտոները եղել է այստեղ. հետևել եմ: Վա՛յ նրան, ով կանգնի իմ ճամփին: Տեսեք, հա՛... .

Նա արագ մոտեցավ բուխարիկին, կրակխառնիչը վերցրեց ու ծռեց իր հսկայական թխացած ձեռքերով:

— Աշխատեցեք ճանկս չընկնե՛լ, — մռնչաց նա, ծոմոված կրակխառնիչը շարտեց բուխարիկին ու դուրս եկավ սենյակից:

— Ի՛նչ սիրալիր պարոն եր, — ծիծաղելով ասաց Հովանը: — Ես նրա պես հսկա չեմ, բայց եթե նա չհեռանար, ստիպված պիտի լինեի ցույց տալ նրան, որ հազիվ թե իրենից թույլ լինեմ:

Այս ասելով նա վերցրեց պողպատե կրակխառնիչն ու մի արագ շարժումով ուղղեց:

— Ինչպիսի՛ հանդգնություն՝ ինձ խառնել ոստիկանների հետ: Այս պատահմունքի շնորհիվ մեր հետազոտություններն ավելի հետաքրքիր դարձան: Հուսով եմ, մեր այցելուիին չի տուժի, որ այսպես չնտածված թույլ տվեց այս անասունին հետևել իրեն: Հիմա մենք կնախաճաշենք, Ուո՛տսըն, իսկ հետո ես կգնամ իրավաբանների մոտ ու մի քանի տեղեկություն կվերցնեմ:

Արդեն ժամը մեկին մոտ էր, երբ Հովանը տուն վերադարձավ: Նրա ձեռքին մի կապույտ թուղթ կար, որի վրա ամբողջովին նշումներ ու թվեր էին գրած:

— Ես տեսա բժշկի հանգուցյալ կնոջ կտակը, — ասաց Հովանը: — Այդ կտակն ավելի լավ ըմբռնելու համար ես ստիպված էի հարցուփորձ անել այն թանկարժեք թղթերի ներկա արժեքի վերաբերյալ, որոնք ամփոփում են հանգուցյալի կարողությունը: Նրա մահվան տարին ընդհանուր եկամուտը կազմել է գրեթե հազար հարյուր ֆունտ ստերլինգ, բայց այդ օրվանից, գյուղատնտեսական մթերքների գների անկման կապակցությամբ, եկամուտը պակասել է, հասնելով մինչև յոթ հարյուր

հիսուն ֆունտ ստերլինգի: Ամուսնանալիս, յուրաքայտուր դուստրն իրավունք ունի ստանալու տարեկան երկու հարյուր հիսուն ֆունտ ստերլինգ եկամուտ: Հետևապես եթե երկու դուստրն էլ ամուսնանային, մեր հերոսը խղճուկ փշրանքներ պիտի ստանար: Նրա եկամուտն զգալիորեն կպակասեր նաև այն դեպքում, եթե աղջիկներից միայն մեկն ամուսնանար. . . Իզուր չկորցրի ամբողջ առավուտը, ես ստացա պարզ ապացույցներ, որ խորթ հայրը չափազանց կարևոր հիմքեր ուներ խանգարելու խորթ աղջիկների ամուսնությունը: Հանգամանքները ավելի քան լուրջ են, Ուո տսըն, և ոչ մի բոպե չի կարելի կորցնել մանավանդ որ ծերուկն արդեն գիտի, թե ինչպես ենք հետաքրքրվում իր գործերով: Եթե դուք պատրաստ եք, պետք է շտապ կանչել մի կեր ու գնալ կայարան: Շատ երախտապարտ կլինեմ, եթե մի ատրճանակ խոթեք ձեր գրպանը: Ատրճանակը հիանալի մի փաստարկ է այն ջենտլմենի համար, որը կարողանում է կապ գցել պողպատե կրակխառնիչը: Ատրճանակ և ատամի խոզանակ. ահա այն ամենը, ինչ մեզ պետք է գալու:

Վաթեռլոո կայարանում մեր բախտը բերեց անմիջապես ընկնել վագոն: Լետերիեդ հասնելով, կայարանի մոտի հյուրանոցում ուղեկառք վարձեցինք և Մերրիի գեղատեսիլ ճանապարհներով անցանք մոտ հինգ կիլոմետր: Հիասքանչ արևոտ առավոտ էր, և երկնքում լողում էին միայն մի քանի փետրածև ամպեր: Ծառերից ու տնկիներից կազմված ճանապարհամերձ ցանկապատների կանաչ բողբոջները հենց նոր էին բացվել, և օդը հագեցած էր խոնավ հողի զմայլելի բուրմունքով:

Տարօրինակ էր թվում ինձ հակադրությունը, որ կար գարնան դուրալի զարթոնքի և այն սարսափելի գործի միջև, որի համար մենք ժամանել էինք այստեղ: Իմ բարեկամը նստել էր թևերը խաչած, գլխարկը քաշած աչքերին, կզակը կրծքին իջեցրած ու թաղված խոր մտքերի մեջ: Մեկ էլ հանկարծ նա բարձրացրեց գլուխը, ձեռքով շպպացրեց ուսիս ու ցույց տվեց արոտավայրերը, ինչոր հեռուն:

— Նայեցեք:

Ընդարձակ զբոսայգին տարածվել էր բլրի լանջին. ճյուղերի հետևից երևում էին կտուրների ուրվագծերը և կալվածատիրական հին տան գմբեթածողը:

— ՍտոկՄորե^օնն է, — հարցրեց Շերլոկ Հոլմսը:

— Այո՛, սը՛ր, դա բժիշկ Գրիմբսի Ռոյլոթի տունն է, — պատասխանեց կառապանը:

— Տան կողքին կից մի շինություն կա, — ասաց Հոլմսը. — մեզ հարկավոր է ընկնել այնտեղ:

— Մենք գնում ենք գյուղի կողմը, — ասաց կառապանը, ցույց տալով կտուրները, որ երևում էին ձախ կողմում՝ որոշ հեռավորության վրա: — Բայց եթե դուք ուզում եք ավելի շուտ մոտենալ տանը, ապա ճամփան կարճ կլինի, եթե անցնեք ցանկապատի վրայով, որով գնում է լեղին:

— Իսկ այն լեղին ոնց որ թե միսս Ստոներն է, — ասաց Հովմարը, ձեռքով շվաք անելով աչքերին: — Հա՛, կաձանով կգնանք:

Մենք իջանք ուղեկառքից, վճարեցինք, և կառքը շարժվեց ետ՝ դեպի Լետերհեդ:

— Թող այս մարդը կարծի, թե մենք ճարտարպետներ ենք, — ասաց Հովմարը. — այդ դեպքում մեր գալն առանձին խոսք ու զրույցի առիթ չի տա: Բարի օր, մի՛սս Ստոներ: Տեսնո՞ւմ եք ինչքան ճշգրիտ կատարեցինք մեր տված խոսքը:

Առավոտվա մեր այցելուհին ուրախուրախ շտապում էր մեզ ընդառաջ:

— Այնպիսի՛ անհամբերությամբ էի սպասում ձեզ, — բացականչեց նա, ջերմագին սեղմելով մեր ձեռքերը: — Ամեն ինչ հիանալի դասավորվեց. բժիշկ Ռոյլոթը գնացել է քաղաք և հազիվ թե մինչև երեկո վերադառնա:

— Մենք հաճույք ունեցանք ծանոթանալու բժշկի հետ, — ասաց Հովմարը և մի երկու խոսքով պատմեց այն բոլորը, ինչ տեղի էր ունեցել:

Միսս Ստոները գունատվեց:

— Աստվա՛ծ իմ, — բացականչեց նա: — Ուրեմն նա եկել է իմ հետքերո՛վ:

— Այդպես է ստացվում:

— Նա այնքան խորամանկ է, որ ես ինձ երբեք ապահով չեմ զգում: Ի՛նչ կասի նա, երբ վերադառնա:

— Նա ստիպված ավելի զգույշ պիտի լինի, որովհետև այստեղ կարող է գտնվել նրանից ավելի խորամանկը: Գիշերը դուք պետք է բանալիով դուռը փակեք, նրանից պաշտպանվելու համար: Եթե նա կատաղի մենք ձեզ կտանենք Հերրոու՝ ձեր մորաքրոջ մոտ. . . Դե. իսկ այժմ որքան կարելի է լավ պիտի օգտագործենք ժամանակը. դրա համար՝ ուղեկցեք մեզ այն սենյակները, որոնք հետազոտելու ենք:

Տունը կառուցված էր քարաքոսով ծածկված մոխրագույն քարից և երկու կիսակոր թև ուներ, որոնք խաչափառի ճանկերի նման տարածվել էին կենտրոնական շենքի երկու կողմում: Թևերից մեկի լուսամուտները ջարդված ու հանված էին ու դրանց տեղը տախտակեր էին խփված. կտուրը տեղտեղ փուլ էր եկել: Կենտրոնական մասը նույնքան քանդված էր թվում: Բայց աջ թևը համեմատաբար

նոր էին վերանորոգել, ծխնելույզներից բարձրացող կապտավուն ծխից ու լուսամուտների փաթվարագույրներից երևում էր, որ ընտանիքը հենց այնտեղ է ապրում: Ծայրային պատի մոտ փայտամածներ էին շինված, սկսված էին ինչոր աշխատանքներ, բայց ոչ մի որմնադիր չէր երևում:

Հոլման սկսեց դանդաղ գնալ ու գալ չմաքրված բացատով, խորին ուշադրությամբ ուսումնասիրելով լուսամուտների արտաքին տեսքը:

— Որքան հասկանում եմ, սա այն սենյակն է, որտեղ դուք ապրել էք առաջ: Մեջտեղի լուսամուտը ձեր քրոջ սենյակի լուսամուտն է, իսկ երրորդ լուսամուտը, այն, որ ավելի մոտ է գլխավոր շենքին, բժիշկ Ռոյլոթի սենյակինն է. . .

— Միանգամայն ճիշտ է: Բայց հիմա ես ապրում եմ մեջտեղի սենյակում:

— Հասկանում եմ, նորոգման պատճառով: Ի դեպ, ինչոր չի նկատվում, թե այդ պատն այդքան անհետաձգելի նորոգման կարիք ունի:

— Բոլորովին կարիք չունի: Կարծում եմ, դա պարզապես պատրվակ է, որ ինձ իմ սենյակից հեռացնեն:

— Շատ հավանական է: Այսպիսով, հանդիպակաց պատի երկայնքով ձգվում է միջանցքը, ուր բացվում են բոլոր երեք սենյակների դռները: Անկասկած, միջանցքում լուսամուտներ կան, չէ՞:

— Այո՛, բայց շատ փոքր են: Այնքան նեղ են, որ անհնար է ներս սողոսկել:

— Քանի որ երկուսդ էլ բանալիով փակում էիք դռները, ապա այն կողմից խցկվել ձեր սենյակները ոչ մի կերպ հնարավոր չէր: Բարի եղեք, մտեք ձեր սենյակն ու փեղկերը փակեք:

Միսս Ստոները կատարեց նրա խնդրանքը: Հոլմսը գործադրեց բոլոր ջանքերը, որպեսզի փեղկերը դրսից բաց անի, բայց չկարողացավ, ոչ մի ճեղք չկար, որի մեջ կարելի լիներ մտցնել գոնե դանակի սայրը՝ նիզը բարձրացնելու համար: Նա խոշորացույցի օգնությամբ գննեց ծխնելիները, բայց դրանք կարծր երկաթից էին և ամուր թաղված էին հաստ պատի մեջ:

— Հը՛մ, — արտասանեց նա, մտասույզ քորելով կզակը: — Իմ սկզբնական հիպոթեզը փաստերով չի հաստատվում: Այս լուսամուտներով ոչ ոք մտնել չի կարող, երբ փակոցափեղկերը վրա են քաշված. . . Լավ, տեսնենք չի՞ հաջողվի արդյոք պարզել որևէ բան, եթե սենյակները ներսից գննենք:

Կողքի փոքր դռնով մտանք կրով սպիտակեցրաց միջանցքը, որի մեջ բացվում էին բոլոր երեք ննջարանների դռները: Հոլմսը հարկ չհամարեց գննել երրորդ

սենյակը, և մենք անմիջապես մտանք երկրորդը, որտեղ այժմ քնում էր միսս Ստոները և որտեղ մահացել էր նրա քույրը: Դա պարզ կահավորված մի սենյակ էր, ցածր առաստաղով ու լայն բուխարիկով, մեկն այն կացարաններից, որ հանդիպում են գյուղական հինավուրց տներում: Սենյակի մի անկյունում դրված էր կոմոդը, մյուս անկյունն զբաղեցնում էր նեղ մահճակալը, որը ծածկված էր սպիտակ ծածկոցով. լուսամուտի ձախ կողմը հարդարման սեղանն էր: Սենյակի հարդարանքը լրացնում էին երկու աթոռ և մեջտեղը փռած հյուսկեն փոքրիկ գորգը: Պատերի պանելները մուգ գույնի ճիճվակեր կաղնուց էին, այնքան հին, որ թվում էր, թե շենքի կառուցման օրից դրանք չէին փոխվել:

Հովմար մի աթոռ վերցրեց և անխոս նստեց անկյունում: Նրա ուշիմ հայացքը պատերի վրայով վեր ու վար էր սահում, վազում սենյակով մեկ, ուսումնասիրելով և մանրագնին դիտելով ամեն մի մանրուք:

— Ո՞ւր է հասնում զանգի այս թելը, — վերջապես հարցրեց նա, ցույց տալով մահճակալի վրա կախված հաստ լարը, որի ծոպիկն ընկած էր գրեթե բարձի վրա:

— Դա հասնում է մինչև սպասավորների սենյակը:

— Սա կարծես թե բոլոր այլ իրերից ավելի նոր է:

— Այո՛, միայն երկուերեք տարի է, ինչ անցկացված է:

— Երևի ձեր քո՞ւյրն է խնդրել, որ անեն:

— Ո՛չ, նա երբեք դրանից չէր օգտվում: Մենք միշտ ինքներս էինք անում ամեն ինչ:

— Իրոք որ այստեղ դա ավելորդ շքեղություն է: Դուք ներեցեք ինձ, ձեզ մի քանի բոպե սպասեցնել պիտի տամ. ուզում եմ մի լավ զննել հատակը:

Խոշորացույցը ձեռքին նա հատակի վրայով չորեքթաթ գնում էր ետ ու առաջ, ուշադիր հետազոտելով տախտակների ամեն մի ճաքը: Նույնպիսի խնամքով նա զննեց պատերի վրայի պանելները: Ապա մոտեցավ մահճակալին, ուշադիր դիտեց չորս կողմից. դիտեց նաև ամբողջ պատը: Հետո նա բռնեց զանգի լարն ու ձգեց:

— Սա հո կե՛ղծ զանգ է, — ասաց նա:

— Չի՞ հնչում: — Լարին միացված էլ չի: Հետաքրքի՛ր է. . . Տեսնո՞ւմ եք, սա կապված է կեռիկին՝ ճիշտ և ճիշտ այն փոքրիկ անցքի վերևը, որ սարքած է օդափոխության համար:

— Ի՛նչ տարօրինակ է. չեմ էլ նկատել այդ:

— Շատ տարօրինակ է. . . փնթփնթում էր Հովմարը, ձգելով լարը: — Այս սենյակում շատ բան կա, որ իր վրա է բնեռում մարդու ուշադրությունը: Օրինակ՝ ինչպիսի՛ իսելացնոր շինարար պիտի լինի, որպեսզի օդափոխիչ անցք սարքի դեպի հարևան սենյակը, երբ նույնպիսի հեշտությամբ դա կարելի էր դրսի կողմն անել:

— Այս բոլորը նույնպես վերջերս է արվել, — ասաց Էլենը:

— Գրեթե միևնույն ժամանակ, ինչպես և զանգը, — նկատեց Հովմարը:

— Այո՛, հենց այդ ժամանակ այստեղ որոշ վերափոխումներ կատարեցին:

— Հետաքրքիր վերափոխումներ են. զանգեր, որոնք չեն զնգում, և օդափոխիչ անցքեր, որոնք չեն օդափոխում: Մի՛ սս Ստոներ, ձեր թույլտվությամբ մենք մեր ուսումնասիրությունները կփոխադրենք մյուս սենյակները:

Բժիշկ Գրիմսբի Ռոյլթի սենյակն ավելի մեծ էր, քան նրա խորթ աղջկանը, բայց նույնպես հասարակ էր կահավորված: Ծալովի մահճակալ, ոչ մեծ փայտե դարակ, որի վրա գրքեր էին դարսված՝ գերազանցապես տեխնիկական. մահճակալի կողքին մի բազկաթոռ, պատի մոտ դրված մի հասարակ հյուսկեն աթոռ, կլոր սեղան ու մի մեծ երկաթե անկիզելի պահարան. ահա այն իրերը, որ աչքի ընկան, երբ մենք մտանք սենյակ: Հովմարը դանդաղ ճեմում էր սենյակում, աշխույժ հետաքրքրությամբ ուսումնասիրելով յուրաքանչյուր առարկան:

— Ի՞նչ կա այստեղ, — հարցրեց նա, — թիկացնելով անկիզելի պահարանին:

— Գործառնական թղթեր:

— Օհո՛, ուրեմն դուք նայել եք այս պահարանի ներսը:

— Միայն մի անգամ, մի քանի տարի առաջ: Հիշում եմ, որ այս պահարանում մի կույտ թղթեր կային:

— Պատահաբար կատու էլ չկա՞ այստեղ:

— Ոչ. ի՞նչ տարօրինակ միտք է. . .

— Ապա նայեք:

Հովմարը պահարանի վրայից վերցրեց կաթով լի փոքրիկ ափսեն:

Չէ, մենք կատու չենք պահում. բայց դրա փոխարեն հովազ ու պավիան ունենք:

— Հովագն, իհարկե, միայն ու միայն մեծ կատու է. բայց կասկածում եմ, թե այսքան փոքր ավսեն նրա ծարավը հագեցնի: Հենց այստեղ է, որ թաքնված է այն, ինչ ես կուզենայի պարզել:

Նա պզգեց աթոռի առաջ և խորին ուշադրությամբ սկսեց ուսումնասիրել նրա նստելատեղը:

— Շնորհակալ եմ, ամեն ինչ պարզ է, — ասաց նա, ոտքի կանգնելով և խոշորացույցը գրպանը դնելով: — Ա՛յ, մի հետաքրքիր բան էլ գտանք. . .

Նրա ուշադրությունը գրավեց մահճակալի անկյունում կախված մի փոքր մտրակ՝ շան համար: Մտրակի ծայրը օղակ էր գցած:

— Ի՞նչ կասեք այս մասին, Ուո՛տսըն:

— Իմ կարծիքով՝ շատ սովորական մտրակ է: Չեմ հասկանում, թե ինչն՞ է համար է պետք եղել ծայրը օղակ գցելու:

— Այնքան էլ սովորական չէ. . . Դե՛, այսքանն ինձ բավական է, մի՛սս, իմացա այն ամենը, ինչ ինձ համար անհրաժեշտ էր, իսկ այժմ, ձեր թույլտվությամբ, մենք դուրս կգանք մի քիչ շրջելու մարգագետնում:

Ես Հովմսին երբեք այդքան մոայլ ու տխուր չէի տեսել: Որոշ ժամանակ մենք դես ու դեն էինք գնում խոր լռության մեջ, և ո՛չ ես, ո՛չ միսս Ստոները չէինք ընդհատում բարեկամիս մտքերի ընթացքը, մինչև որ ինքը սթափվեց մտազբաղությունից:

— Շատ կարևոր է, որ դուք ճշգրիտ կերպով հետևեք իմ խորհուրդներին, մի՛սս Ստոներ, — ասաց նա:

— Ամեն ինչ կկատարեմ անառարկելի:

— Հանգամանքները չափից դուրս լուրջ են, և տատանվել չի կարելի: Ձեր լիակատար հնազանդությունից է կախված ձեր կյանքը:

— Ես ինձ հանձնում եմ ձեր ձեռքը:

— Նախ և առաջ երկուսս էլ՝ ես և իմ բարեկամը գիշերը պիտի մնանք ձեր սենյակում:

Միսս Ստոներն ու ես զարմացած նայեցինք նրան:

— Դա անհրաժեշտ է: Ամեն ինչ կբացատրեմ. այն ի՞նչ է այնտեղ՝ ճանապարհի մյուս կողմը: Գյուղական հյուրանոցն է:

— Այո՛, այնտեղ «Թագ» հյուրանոցն է:

— Շատ լավ: Այնտեղից ձեր լուսամուտները երևո՞ւմ են:

— Իհարկե:

— Երբ ձեր խորթ հայրը վերադառնա, ասացեք, որ ձեր գլուխը ցավում է, քաշվեք ձեր սենյակն ու դուռը բանալիով փակեցեք: Հետո, երբ լսեք, որ նա գնաց քնելու, բաց կանեք ձեր լուսամուտի ծածկափեղկերը, նիզը կհանեք ու լամպը կդնեք լուսամուտը. այդ լամպն ազդանշան կլինի մեզ համար: Հետո ձեզ հետ կվերցնեք ինչ կամենաք և կանցնեք այն սենյակը, որ առաջ զբաղեցնում էիք: Համոզված եմ, որ չնայած վերանորոգմանը, դուք մի անգամ կարող եք գիշերել այնտեղ:

— Անշուշտ:

— Մնացածը թողեք մեր կամքին:

— Բայց ի՞նչ եք պատրաստվում անել:

— Մենք մի գիշեր կանցկացնենք ձեր սենյակում և կպարզենք աղմուկի պատճառը, որ ձեզ վախեցրել է:

— Ինձ թվում է, միստր Հոլմս, որ դուք արդեն որոշ եզրակացության եկել եք, — ասաց միսս Ստոները, ձեռք տալով բարեկամիս թևքին:

— Կարող է պատահել, այո:

— Այդ դեպքում, ի սե՛ր ամենայն սրբության, ասացեք ինձ՝ ինչի՞ց մեռավ քույրս:

— Կուզենայի հանցանքի ավելի ճիշտ նշաններ հավաքել:

— Այդ դեպքում գոնե ասացեք ինձ. ճի՞շտ է իմ ենթադրությունը, որ նա հանկարծակի վախից է մեռել:

— Ոչ, ճիշտ չէ. ենթադրում եմ, որ նրա մահվան պատճառը ավելի առարկայական է եղել. . . Իսկ այժմ, մի՛սս Ստոներ, մենք ձեզ մենակ պիտի թողնեք, որովհետև, եթե միստր Ռոյլթը վերադառնա և մեզ տեսնի, մեր այստեղ գալը միանգամայն իզուր դուրս կգա: Ցտեսություն: Եղեք արի, արեք այն ամենը, ինչ ձեզ ասացի, և մի՛ կասկածեք, որ մենք արագ կվերացնենք ձեզ սպառնացող վտանգը:

Ես ու Շերլոկ Հոլմսն առանց որևէ դժվարության «Թագ» հյուրանոցում մի համար վարձեցինք: Մենյակը վերին հարկում էր, ու մեր լուսամուտից տեսանելի էին զբոսայգու դարբասը և ՍտոկՄորենի տան բնակելի թևը: Մթնշաղի մեջ մենք

տեսանք, թե ինչպես հյուրանոցի մոտով կառք նստած անցավ բժիշկ Գրիմսբի Ռոյլոթը. նրա ծանր մարմինը սարի պես բարձրանում էր կառքը վարող տղայի վտիտ կերպարանքի կողքին: Տղային չհաջողվեց միանգամից բաց անել ծանր դարբասը, և մենք լսեցինք, թե ինչպես բժիշկը խռպոտ ձայնով մոնչում էր նրա վրա, և տեսանք, թե ինչպիսի կատաղությանբ էր նա բռունցքները թափահարում նրա քթի առջև: Կառքն անցավ դարբասը, և մի քանի րոպե հետո հյուրասենյակներից մեկում վառած լամպի լույսը փայլկտաց ծառերի արանքում:

Մենք նստած էինք մթության մեջ, առանց կրակը վառելու:

— Իսկապես ասած՝ չգիտեմ, տանե՞մ ձեզ ինձ հետ գիշերը, թե՞ ոչ, — ասաց Հոլմսը: — Բանից դուրս է գալիս, գործը շատ վտանգավոր է:

— Կարո՞ղ եմ ձեզ համար օգտակար լինել:

— Ձեր օգնությունը կարող է վիթխարի լինել:

— Այդ դեպքում ես անպայման կգամ:

— Շնորհակալ եմ:

— Դուք խոսում եք վտանգի մասին: Հավանաբար դուք այն սենյակներում տեսել եք մի բան, որ ես չեմ տեսել:

— Ոչ, ես նույնն եմ տեսել ինչ որ դուք, բայց այլ եզրակացություններ եմ արել:

— Սենյակում ես ոչ մի տարօրինակ բան չտեսա, բացի զանգի լարից, բայց խոստովանում եմ, որ անընդունակ եմ հասկանալու, թե ի՞նչ նպատակի կարող է ծառայել այդպիսի զանգը:

— Իսկ օդափոխիչ անցքի վրա ուշադրություն դարձրի՞ք:

— Այո՛, բայց ինձ թվում է, թե երկու սենյակի մեջտեղի այդ փոքրիկ անցքը ոչ մի անսովոր բան չունի: Դա այնքան փոքր է, որ նույնիսկ մուկը հազիվ թե անցնի նրա միջով:

— Այդ օդափոխիչ անցքի մասին ես գիտեի ավելի շուտ, քան մենք ՍտոկՄորեն եկանք:

— Մի՞ թե:

— Այո՛, գիտեի: Հիշո՞ւմ եք, միսս Ստոններն ասաց, թե իր քույրը բժիշկ Ռոյլոթի սիզարետների հոտն էր առնում: Իսկ այդ բանն ապացուցում է, որ երկու սենյակի

միջև անցք կա, և իհարկե, անցքը շատ փոքր է, հակառակ դեպքում դա կնկատեր քննիչը, երբ նայում էր սենյակները: Ես վճռեցի, որ այդտեղ օդափոխիչ պիտի լինի:

— Բայց ի՞նչ վտանգ կարող է լինել օդանցքից:

— Մի տեսեք, թե ինչպիսի տարօրինակ զուգադիպություն է. մահճակալի վերևը օդափոխիչ անցք են սարքում, լար են կախում, և լեդին, որ քնում էր այդ մահճակալին, մեռնում է: Մի թե սա չի ապշեցնում ձեզ:

— Մինչև այժմ չեմ կարողանում կապակցել այդ հանգամանքները:

— Իսկ մահճակալի հարցում առանձին բան չնկատեցի՞ք:

— Ո՛չ:

— Այդ մահճակալը պտուտակներով ամրացված է հատակին: Դուք առաջներում երբևէ տեսե՞լ էք, որ մահճակալները պտուտակներով ամրացված լինեն հատակին:

— Իրոք որ չեմ տեսել:

— Լեդին իր մահճակալը տեղից շարժել չէր կարողանում. նրա մահճակալը միշտ էլ մնում էր միննույն դիրքում օդափոխիչ անցքի և լարի նկատմամբ: Այդ զանգն ստիպված պետք է պարզապես լար անվանել, քանի որ դա չի զնգում:

— Հույս, — գոչեցի ես, — թվում է թե ինձ համար էլ հիմա մի քիչ պարզ է դառնում այն, ինչ ձեզ համար միանգամայն պարզ է: Մենք ճիշտ ժամանակին ենք եկել, որպեսզի կանխենք սարսափելի և նրբորեն մտածված ոճրագործությունը:

— Այո՛, նրբորեն մտածված ու սարսափելի: Երբ բժիշկն է կատարում ոճրագործությունը, ավելի սարսափելի է, քան մյուս ոճրագործները: Նա ուժեղ ջղեր ունի և վտանգավոր գիտելիքներ. . . Այդ մարդը շատ խորամանկն է, բայց ես հույս ունեմ, Ուո՛տսըն, որ մեզ կհաջողվի նրանից ավելի խորամանկ լինել: Այս գիշեր մենք շատ սարսափներ պիտի ապրենք. դրա համար էլ, խնդրում եմ, եկեք առայժմ հանգիստ ծխենք մեր ծխամորճները և այս մի քանի ժամն անցկացնենք որևէ ավելի ուրախ բանի մասին խոսելով:

Ժամը իննին մոտ ծառերի արանքից երևացող լույսը հանգավ, և կալվածքը թաղվեց խավարի մեջ: Այդպես անցավ մի երկու ժամ, և հանկարծ, ճիշտ ժամը տասնմեկին, մենավոր վառ լույսը փայլեց ուղիղ մեր լուսամուտի դիմաց:

— Դա ազդանշան է մեզ համար, — ասաց Հույսը, վեր թռչելով տեղից: — Լույսը վառվում է մեջտեղի լուսամուտում:

Ռուրս գալիս, նա հյուրանոցի տիրոջը բացատրեց, որ մենք հյուր ենք գնում մի ծանոթի մոտ և կարող է պատահել, որ այնտեղ էլ գիշերենք: Մի բուպե հետո մենք հասանք մթամած ճանապարհին: Պաղ քամին փչում էր դեմքներիս, և դեղին լույսը, որ առկայծում էր մեր առջև՝ խավարում, ցույց էր տալիս ուղին:

Տանը հասնելը դժվար չէր, որովհետև հին ցանկապատը շատ տեղերում փլված էր: Ծառերի արանքից անցնելով, մենք հասանք մարգագետին, կտրեցինք անցանք այդ բացատը և հենց այն է ուզում էինք մտնել լուսամուտով, հանկարծ ինչոր մի էակ, որ նման էր գարշելի հրեշերեխայի, դուրս թռավ դափնու թփերից, ծոմովելով ընկավ կանաչին, իսկ հետո արագ սլացավ մարգագետնով ու կորավ մթության մեջ:

— Աստված իմ, — շշնջացի, — տեսա՞ք:

Առաջին պահին Հովման ինձանից պակաս չվախեցավ: Նա թափով բռնեց ձեռքս ու սեղմեց, ասես մամլակով: Ապա կամացուկ ծիծաղեց ու հազիվ լսելի ձայնով մոթմոթաց:

— Անո՛ւշ ընտանիք է. . . Չէ՞ որ դա պավիանն է:

Ես մոռացել էի բժշկի սիրելիներին: Հապա հովազը, որ ամեն բուպե կարող է հայտնվել մեր ուսերի՞ն: Ճիշտն ասած, ես ավելի լավ զգացի ինձ, երբ Հովման օրինակին հետևելով, կոշիկներս հանեցի, մտա լուսամուտով ու հայտնվեցի ննջարանում: Բարեկամս անաղմուկ փակեց ծածկափեղկերը, լամպը տեղափոխեց սեղանին և արագ նայեց շուրջը: Այստեղ ամեն ինչ այնպես էր, ինչպես ցերեկը: Նա մոտեցավ ինձ և ձեռքերին ձայնափողի տեսք տալով, շշնջաց:

— Մի աննշան ձայնը մեզ կկործանի:

Ես գլխով արեցի:

— Ստիպված՝ առանց ճրագի պիտի նստենք: Օդափոխիչ անցքից նա կարող է տեսնել լույսը:

Ես մի անգամ էլ գլխով արեցի:

— Չքնեք. դրանից է կախված ձեր կյանքը: Ատրճանակը պատրաստ պահեք: Ես կնստեմ մահճակալի եզրին, իսկ դուք նստեցեք աթոռին:

Ես հանեցի ատրճանակս ու դրեցի սեղանի անկյունին: Հովման իր հետ բերել էր բարակ ու երկար մի ձեռնափայտ, որը դրեց իր կողքին՝ մահճակալի վրա, մի տուփ լուցկու և մոմի կտորի հետ միասին, փչեց հանգրեց լամպը, և մենք մնացինք լիակատար մթության մեջ:

Կմոռանա՞մ երբևէ, արդյոք, այդ սարսափելի անքուն գիշերը. . . Ոչ մի ձայն չէր հասնում ինձ: Չէի լսում նույնիսկ բարեկամիս շնչառությունը, այնինչ գիտեի, որ նա նստած է ինձանից երկու քայլ հեռու, աչքերը բաց, նույնպիսի լարված ներվային վիճակում, ինչպես և ես: Ծածկափեղկերից չէր թափանցում ոչ մի ճառագայթ ու մենք նստած էինք բացարձակ մթության մեջ: Դրսից հազվադեպ լսվում էր գիշերային թռչունի ճիչ, իսկ մի անգամ հենց մեր լուսամուտի տակ մի երկար ոռնոց լսվեց, որ կատվի մլավոցի նման էր. ըստ երևույթին, հովազն իրոք որ ազատ շրջում էր դրսում: Լսելի էր, թե ինչպես հեռվում եկեղեցու ժամացույցը խլաձայն խփում է ամեն մի ժամաքառորդին: Ինչքա՛ն երկար էին թվում մեզ դրանք՝ յուրաքանչյուր տասնհինգ րոպեն: Խփեց տասներկուսը, մեկը, երկուսը, երեքը, իսկ մենք անշարժ ու լուռ նստած էինք, սպասելով ինչոր անխուսափելի մի բանի:

Հանկարծ օդափոխիչի մոտ առկայծեց լույսի մի շող և իսկույն ևեթ անհետացավ: Բայց մենք հենց նույն րոպեին վառվող յուղի և շիկացած մետաղի ուժեղ հոտ զգացինք. ինչոր մեկը հարևան սենյակում գաղտնալապտեր վառեց: Ես լսեցի, թե ինչպես մի բան շարժվեց, ապա ամեն ինչ լռեց, միայն հոտն ավելի ուժեղացավ: Մի կես ժամ նստած էի ու լարված հայացքս հառել էի մթության մեջ: Հանկարծ լսվեց ինչոր նոր ձայն՝ քնքուշ ու կամացուկ, ասես կաթսայից գոլորշու շիթ էր դուրս պրծնում: Լսելով այդ ձայնը, Հոլմսն անմիջապես վեր թռավ մահճակալից, լուցկին վառեց և իր ձեռնափայտով կատաղորեն մտրակեց լարին:

— Դուք տեսնո՞ւմ եք դրան, Ուո՛տսըն, — բղավեց նա: — Տեսնո՞ւմ եք. . .

Բայց ես ոչինչ չէի տեսնում: Մինչ Հոլմսը չրթացնում էր լուցկին որ վառվի, ես լսում էի կամացուկ ու որոշակի մի սուլոց, բայց հանակարծակի բխած վառ լույսն այնպես կուրացրեց հոգնած աչքերս, որ ոչինչ չկարողացա նշմարել և չհասկացա, թե ինչու է Հոլմսն այդպես կատաղորեն խփում ձեռնափայտով: Այնուամենայնիվ հասցրի տեսել սարսափի ու զզվանքի արտահայտությունը նրա մեռելայինգունատ դեմքին:

Հոլմսը դադարեց ձաղկելուց և սկսեց խորագնին դիտել օդափոխիչը, երբ գիշերվա լռությունը հանկարծ ճոռթեց այնպիսի մի սարսափելի բղավոց, որ կյանքումս երբեք չէի լսել: Այդ խռպոտ բղավոցը, որի մեջ միախառնվել էին տանջանքը, վախն ու ցասումը, քանի գնում ավելի ու ավելի բարձր էր դառնում: Հետագայում պատմում էին, որ այդ բղավոցն արթնացրեց բոլոր քնածներին ոչ միայն գյուղում, այլև քահանայի հեռավոր տանը: Մենք սարսափահար նայում էինք իրար, մինչև որ վերջին վայնասունը մարեց լռության մեջ:

— Ի՞նչ է նշանակում սա, — շնչահեղձ լինելով հարցրի ես:

— Մա նշանակում է, որ ամեն ինչ վերջացավ, — պատասխանեց Հովմար: — Եվ եթե ճիշտն ուզում եք իմանալ՝ դեպի լավն է գնում: Վերցրեցեք ձեր ատրճանակն ու եկեք գնանք բժիշկ Ռոյլոթի սենյակը:

Հովմարի դեմքը մռայլ էր: Նա լամպը վառեց ու գնաց միջանցքով: Երկու անգամ թակեց բժշկի սենյակի դուռը, բայց ներսից ոչ ոք չպատասխանեց: Այն ժամանակ նա պտտեց բռնակն ու մտավ սենյակ: Ես քայլում էի նրա հետևից, լցրած ատրճանակը ձեռքիս:

Արտասովոր մի տեսարան բացվեց մեր աչքի առաջ: Սեղանին դրված էր գաղտնալապտերը. դա լույսի մի վառ շող էր գցում երկաթե անկիզգելի պահարանի վրա, որի դռնակը կիսաբաց էր: Սեղանի մոտ ծղոտե աթոռին նստած էր բժիշկ Գրիմսբի Ռոյլոթը՝ երկար մոխրագույն խալաթը հագին, որի տակից երևում էին նրա մերկ ոտքերի կոճերը: Նրա ոտքերին՝ առանց կրնկամասի թուրքական կարմիր քոշեր կային: Ծնկներին ընկած էր հենց այն մտրակը, որ մենք նրա սենյակում տեսել էինք դեռևս ցերեկը: Ռոյլոթը նստել էր կզակը վեր ցցած, անշարժ աչքերը հառած առաստաղին: Նրա հայացքում սառել էր սարսափելի մռայլ մի արտահայտություն: Գլխի շուրջը գալարված էր ինչոր արտասովոր, շագանակագույն պուտիկներով դեղին մի ժապավեն: Մեր հայտնվելու պահին բժիշկը չշարժվեց և ոչ մի ձայն չհանեց:

— Ժապավեն՝ նր, խայտաբղետ ժապավեն՝ նր, — շշնջաց Հովմար:

Ես մի քայլ առաջացա: Հենց նույն ակնթարթին տարօրինակ գլխակապը շարժվեց, և բժիշկ Ռոյլոթի մազերի միջից բարձրացավ սարսափելի օձի երեսակավոր գլխիկը:

— Ճահճային ի՛ժը, — բղավեց Հովմար. — ամենամահաբեր հնդկական օձը: Այս մարդը մեռել է օձի կծելուց տասը վայրկյան հետո: «Մուր բարձրացնողը սրից էլ կմեռնի»: Այս գարշելի արարածին դնեք իր որջը, հետո միսս Ստոններին ուղարկենք մի որևէ հանգիստ տեղ և հայտնենք ոստիկանությանը կատարվածի մասին:

Այս ասելով նա մեռածի ձեռքից վերցրեց մտրակը, օղակն անցկացրեց օձի գլուխը, քաշեց իջեցրեց նրան իր սարսափելի թառից ձեռքն առաջ պահած՝ օձը տարավ դեպի անկիզգելի պահարանը, շարտեց այնտեղ ու թափով փակեց դռնակը:

Այսպիսին են ՍտոկՄորենցի բժիշկ Գրիմսբի Ռոյլոթի մահվան իսկական հանգամանքները: Ես մանրամասն չեմ պատմի, թե ինչպես մենք տխուր նորությունը հայտնեցինք վախեցած օրիորդին, թե ինչպես առավոտվա գնացքով նրան ճանապարհ դրինք Հերոու՝ իր մորաքրոջ խնամքին և թե ինչպես մի փոքր բութ ոստիկանական հետաքննությունը եկավ այն եզրակացության, որ բժիշկը մեռել է հենց իր անզգուշությունից, երբ խաղում ու զվարճանում էր իր սիրելի՝ թունավոր օձի հետ: Մնացածը Շերլոկ Հովմարը պատմեց ինձ, երբ մյուս օրը վերադառնում էինք տուն:

— Սկզբում ես եկա բուլոբովին ոչ ճիշտ եզրակացությունների, իմ սիրելի Ուո'տսըն, — ասաց նա, — և դա ցույց է տալիս, թե ինչքան վտանգավոր է հիմնվել ոչ ճշգրիտ տվյալների վրա: Գնչունների ներկայությունը, «բանդա» բառը որ ասել էր դժբախտ աղջիկը, այս բուլոբը բավական էին՝ ինձ սխալ հետքով տանելու համար: Բայց երբ ինձ հայտնի դարձավ, որ ոչ չ դռնով, ոչ չ լուսամուտով սենյակ չես մտնի, որ այդտեղից չի սպառնում վտանգը սենյակի բնակչին, անմիջապես հասկացա սխալս, և դա կարող է ծառայել որպես արդարացում: Ինչպես ձեզ ասացի, իմ ուշադրությունը միանգամից գրավեցին օդափոխիչ անցքն ու զանգի լարը, որ կախված էր մահճակալի վերևը: Երբ հայտնաբերվեց, որ զանգը կեղծ է, իսկ մահճակալն ամրացված է հատակին, իմ մեջ կասկած առաջացավ, որ լարը՝ օդափոխիչը մահճակալի հետ կապող կամուրջի դեր է կատարում: Իմ գլխում անմիջապես ծագեց միտքը օձի մասին, և գիտենալով, թե որքան է սիրում բժիշկն իրեն շրջապատել ամեն տեսակի հնդկական սողուններով ու գազաններով, հասկացա, որ արդեն ստույգ հետքով եմ գնում: Հենց այդպիսի խորամանկ, դաժան, շատ տարիներ արևելքում ապրած չարագործի գլխում կարող էր ծագել միտք, գործադրել մի թույն, որ հնարավոր չի հայտնաբերել քիմիական միջոցով: Նրա կարծիքով այդ թույնի օգտին էր խոսում նաև այն, որ դա ազդում է վայրկենապես: Քննիչը պետք է որ արտասովոր սուր տեսողություն ունենար, որպեսզի նկատեր երկու մանրիկ սև բծիկները, որ թողել էին օձի ատամները: Հետո ես հիշեցի սուլոցը: Սուլելով բժիշկը ետ էր կանչում օձին, որպեսզի լուսաբացին նրան չտեսնեն: Հավանաբար, նրան կաթ տալով, բժիշկն օձին սովորեցրել էր վերադառնալ իր մոտ: Օձը նա անցկացնում էր օդափոխիչ անցքով գիշերվա ամենխուլ ժամին և հաստատ գիտեր, որ սողունը կգնա լարի վրայով ու կիջնի մահճակալին: Վաղ թե ուշ աղջիկը սարսափելի մտահոգման գոհր պիտի դառնար. օձը կկծեր նրան եթե ոչ այսօր, ապա մի շաբաթ հետո: Ես այդ եզրակացություններին եկա բժիշկ Ռոյլոթի սենյակը մտնելուց առաջ: Իսկ երբ ուսումնասիրեցի նրա աթոռի նստելատեղը, հասկացա, որ բժիշկը սովորություն ուներ կանգնել աթոռին, որպեսզի հասնի օդափոխիչ անցքին: Իսկ երբ տեսա անկիզգելի պահարանը, կաթով լի փոքրիկ ափսեն ու մտրակը, կասկածներս վերջնականապես փարատվեցին: Մետաղի զրնգոցը, որ լսում էր միսս Ստոները, ըստ երևույթին անկիզգելի դռան ձայնն էր, ուր բժիշկը թաքցնում էր օձը: Ձեզ հայտնի է, թե ինչ արեցի, երբ համոզվեցի եզրակացություններիս ճշտության մեջ: Հենց որ լսեցի օձի ֆշշոցը, անհապաղ վառեցի լույսը և ձեռնափայտով սկսեցի ձողկել նրան:

— Դուք վնդեցիք նրան ետ՝ դեպի օդափոխիչ անցքը. . .

— . . . Հենց դրանով էլ ստիպեցի հարձակվել տիրոջ վրա: Ձեռնափայտիս հարվածները կատաղեցրին նրան. նրա մեջ արթնացավ օձային չարությունը, և նա հարձակվեց առաջին իսկ պատահած մարդու վրա: Այսպիսով, ես կողմնակի կերպով մեղավոր եմ բժիշկ Գրիմսբի Ռոյլոթի մահվան մեջ, բայց չեմ կարող ասել, թե այդ մեղքը ծանր բեռի նման ընկած է խղճիս վրա:

1. Բենգալիա — մարզ Հնդկաստանում: